

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мпакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և առաւօրեայ օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիարժէքով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր թաւին 2 կոպէկ:

ՆԵՐԿԱՅ 1888 ԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոպրիետարով: Մեր կը ստանանք սեփական
ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ:
«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսվանը 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿԻ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների միջև)
կիւնում, Թամազիսի տանը:
Կայսերական ռուս թագաւորի «ՄՇԱԿԻ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հաս-
ցէով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МПАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիֆլիսում բացված
պատկերահանդէսը. Գիմնազիաների զուգընթաց
դասարանները. Բժշկական ընկերութեան նիստը.
Նամակ Աղստաֆայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱ-
ԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ձերբակալութիւնների թիւը բաց
Հայաստանում. Վերջին դէպքերը Կ. Պոլսում. Ար-
տաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ.
—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻՄ ԲՅԱՎԱՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՆԴԱՆԴԵՐ

Կառավարչապետի պալատում բացված պատ-
կերահանդէսը բաւական հարուստ է այլ և այլ
պատկերներով և բաւական յաճախված է հաս-
րակութեան կողմից:

Նկարների և պատկերների (ձևականների և
ակուստիկների, նոյնպէս և մատիտով նկարած
պատկերների) ամբողջ թիւը 200-ից է անցնում:

Բացի մի քանի աշխարհահռչակ նկարներից
պատկերներից, որոնք մասնաւոր տեսիլից ժամա-
նակաւոր կերպով են վերցրած, և որոնց մասին
մենք աւելորդ ենք համարում խօսել, իրանց վրա
այցելողի ուշադրութիւնը դարձնում են նախ-
ԲՈՐՍԱ ՈՐ ԲԱՆԱԳԻՆ նկարները, որոնք պատկերա-
ցնում են կովկասեան պատերազմական կեանքի
այլ և այլ էպիզոդները: Դրանք զինուորական
թանգարանի սեփականութիւն են կազմում Բու-
քարի նկարչութեան ձեռք մէջ, մեր կարծիքով, նա-
նաւոր է այն յատկութիւնը, որ չը նայելով նկա-
րի ահագին մեծութեան, և բազմաթիւ մանրա-
մասնութիւնների, նայողի աչքը չէ ցրվում այդ
մեծութեամբ ու մանրամասնութիւններով, այլ
ներա յայտացրը ակամայ կենտրոնանում է պատ-
կերի մի յայտնի կենտրոնի վրա, քանի որ Բու-
քարի պատկերների մէջ միշտ կայ մի յայտնի կէտ,
մարդկանց մի զխաւոր խումբ, որ նկարի զխա-
ւոր կենտրոնն է կազմում և գրաւում է իր վրա
նայողի ուշք ու միտքը: Այնու ամենայնիւ Բուքարի
պատկերները վերջ ի վերջոյ միակողմանի և միա-
կերպ են թվում հանդիսականին, քանի որ այդ
նկարների նկարը միշտ մի և նոյն է պատերազմի,
կուրի, արիւնհեղութիւն: Մեր տեղական նկարիչ-
ներից ամենից շատ իրանց վրա ուշադրութիւն
են դարձնում Բաշին ջաղեան, որի նկարչու-
թեան զեղեցիկ և հանդարտ ժանրի հետ արդէն
ծանօթ է մեր ընթերցողը, այնուհետև ԿՕԼԷԻՆ,
իր տեղական տիպիկ աշողված և սիրուն էտիւդ-
ներով և իր վերին աստիճանի նման կենդանա-
գիւններով, ՉԱՆԿՕՎԱԿԻ իր թափանցիկ ու
միշտ թարմ պէյզաճներով, վերջապէս ԼՕՆԳՕ
և ՇԱՄԻԶԻՆՕՎ: Առաջինը մեզ մօտ յայտնի է
տեղական տիպիկ էտիւդներով և կենդանադի-
ներով, իսկ երկրորդը պէյզաճները մենք առաջին
անգամ առիթ ունեցանք այդ պատկերահանդէ-
սում տեսնելու: Սրա պէյզաճներից ամենաշոգ-

վածն է, մեր կարծիքով, «Լեւոնային ծովակ» ա-
նունով նկարը:

Արդէն մենք հեղինակութիւն և հռչակ ունե-
ցող նշանաւոր նկարիչների հին նկարների մա-
սին, որոնք այժմ հանդէս են դրված, և ո-
րոնք արթն է ամենքին, ով գեղարուեստով է հե-
տաքրքրվում, ծանօթ են թէ որպէս բնագիւններ,
թէ որպէս պատճեններ,—միտք չունի խօսելու և
քննադատութիւն անելու. իսկ տեղական, նոր ոյ-
ժերի աչքի ընկնող արդիւնաբերութիւններին մենք
չը հանդիպեցինք պատկերահանդէսում: Ինչ և ի-
ցէ, այդ տեսակ պատկերահանդէսները ունեն մի-
միայն նշանակութիւն որպէս բարեգործական
նպատակով, նկարչական դպրոցը նկարչական պա-
պանելու համար բացված ցուցահանդէս, բայց որ
և է կրթողական նշանակութիւն նրանք չեն կարող
ունենալ ոչ ամբողջ մեծամասնութեան վրա, ոչ
էլ գեղարուեստով պարագելու սկսողների, նկար-
չութեամբ հետաքրքրվող աշակերտների վրա, քա-
նի որ այդ տեսակ պատկերահանդէսները, զուրկ
լինելով սխտեսայից, պատկերները դասաւորված
չը լինելով չկոյնների (պարտիզների) և տեսակների
(ժանրների) համեմատ, ներկայացնում են մի ան-
կարգ, խառնաշփոխ կուտակում, մի պ ա տ ա-
հ ա կ ա ն հաւաքածու ամեն տեսակ ժանր և չկո-
ւա ներկայացնող նկարների կրթողական ազդե-
ցութիւն և նշանակութիւն չէ կարող ունենալ
այդ տեսակ պատկերահանդէս և այն պատճառով
որ բացի ժանրի, տեսակի և չկոյնի տարբերու-
թիւնից, բացակայ է որ և է սխտեսմա և գեղա-
րուեստական ոյ ժ ե թ ի դասաւորութիւն, համա-
կարգութիւն: Մի երևելի, աշխարհահռչակ և հե-
ղինակաւոր մաէստրոյ վրձինի արդիւնքը կող-
քին հանդիսականը յանդարտ, առանց այլ և այ-
լութեան, դրված է տեսնում կամ մի սկսողի
նկարը, կամ մի շատ միջակ նկարի վրձինի թոյլ
և աննշան արդիւնքը: Այդ խառնաշփոխ բնաւո-
րութեան և որ և է որոշ սխտեսմայից զուրկ լի-
նելու պատճառով է, որ այդ տեսակ պատկերա-
հանդէսներ ոչինչ որոշ, խոր և տեղական տպա-
ւորութիւն չեն թողնում այցելողի հոգու վրա,
չեն դրոշմում նայողի ուղեղի և սրտի մէջ, ան-
միջապէս ջնջվում են նրա յիշողութիւնից, և ան-
գոր են հանդիսանում իրանցով ծննդին նայողի
ուղեղի մէջ, ինչպէս մեր մասնավարժները ասում
են, ինքնուրոյն մ ա տ ա պ ա տ կ ե թ ե ռ և ը:

Գ. Ա.

ԳԻՄՆԱԶԻԱՆԵՐԻ ԶՈՒԳՐԱԾԱՅ ԳԱՍԱՏՆԵՐԸ

Ժողովրդական լուսաւորութեան միջնորդու-
թեան կարգադրութեամբ, ինչպէս արդէն յայտնի
է, գիմնազիաների զուգընթաց դասարանները պէտք
է փակվեն: Միջնորդութիւնը իր այդ կարգա-
դրութիւնը պատճառաբանում է նրանով, որ դան-
ձարանի ֆինանսական դրութիւնը թոյլ չէ տալիս
կրկնապատիկ ծախսեր անելու և զուգընթաց դա-
սարանի պահելու: Առանց բացատրութեան էլ
հասկանալի է, որ զուգընթաց դասարանների փակե-

լը շատ զգալի կերպով կը պակասեցնէ գիմնազիա-
նեան սաների թիւը, և բացի դրանից գիմնազիա-
նեան չէ կարող ընդունվել ցանկացողների նոյն
իսկ այն պրոցենտը, որ ընդունվում է այժմ
կըր զուգընթաց դասարանները գոյութիւն ունեն
Բայց այդ երևոյթը ինքն ըստ ինքեան արդէն ու-
շադրութեան արժանի է, քանի որ ուսում ստա-
նալ ցանկացողները, գիմնազիա մտնել ցանկացող-
ների թիւը՝ օրից օր աճում, մեծանում է, իսկ
զրա հակառակ, գիմնազիաները չեն կարող ըն-
դունել նոյն իսկ այնքան մաներ, որքան առաջ
էին ընդունում:

Անցեալ տարի խօսելով «Մշակի» մէջ գիմնա-
զիաների պատրաստական դասարանները փակելու
մասին, մենք այն միտքը յայտնեցինք, որ նոյն
իսկ հասարակութեան նախաձեռնութեամբ պէտք
է ինքնին նախապատրաստական դպրոցներ, որոնք
յանձն առնէին պատրաստել աշակերտներ գիմ-
նազիաների և պրոգիմնազիաների հիմնական դա-
սարանների համար: Մենք դեռ այն ժամանակ ա-
սեցինք, որ այդ գործում նախաձեռնող կարող է
լինել կամ ինքը հասարակութիւնը, իր սեփական
ինիցիատիվով, և կամ քաղաքային հաստատու-
թիւնները, քաղաքային վարչութիւնները, քանի
որ մի կողմ թողնելով ընկերական ոյժերով հիմնա-
վելի դպրոցները,—եթէ նախապատրաստական
դպրոցները հիմնվեն և պահվեն մասնաւոր մարդ-
կանց ձեռքով, անկասկած, զրանք զնի կողմից
այնքան թանկ կը լինեն, որ չեն կարող մատչելի
լինել հասարակութեան նոյն իսկ միջին դասա-
կարգին: Նոյնը կարող ենք ասել և այժմ: Գիմ-
նազիաների զուգընթաց դասարանները փակվում
են, ինչպէս երևում է միջնորդութեան բացատ-
րութիւնից, նիւթական միջոցների պակասութեան
պատճառով, և այդպիսով այդ դպրոցները չը
պէտք է կարողանան իրանց պատերի մէջ ընդու-
նել բազմաթիւ ցանկացողներին:—Այդ դէպքում
հասարակութեանը օգնութիւն պէտք է հասցնեն
նոյն իսկ հասարակական հիմնարկութիւնները,
ինչպէս են մեր քաղաքային վարչութիւնները:
Խոստատարանում այդպիսի հիմնարկութիւնները
անցեալ տարի մենք պատրաստականութիւն յայտնե-
ցինք իրանց հաշուով նախապատրաստական դպրոց-
ների պահելու՝ գիմնազիական պատրաստականնե-
րի փոխարէն: Նոյն պատրաստականութիւնը ան-
կասկած երևան կը գայ և այժմ, և ցանկալի է,
որ քաղաքային վարչութիւնները կողմասում,
զոնէ այժմ նախաձեռնող հանդիսանային, և աշ-
խատին հասարակութեանը օգտակար լինել մի
այդպիսի գործում, ինչպիսին վերոյիշեալ խնդիրն
է: Գիմնազիաների զուգընթաց դասարանների փա-
կելը աւելի զգալի կարող է լինել ժողովրդի համար,
քան թէ այն մի շարք հարցեր, որոնց վրա մեր
քաղաքային վարչութիւնները վստահ են և
փող և ժամանակ: Մենք չենք մտնի այդ գործը
զուրկ բերելու միջոցների մանրամասնութիւնների
մէջ, և առայժմ հարկաւոր էլ չենք համարում
մատնանիլ անել, թէ ինչպէս և ինչ ճանապարհով
կարող են մեր քաղաքային վարչութիւնները օժան-
դակել այդ գործին, և միջոց տալ, որ միջնորդու-
րում ստանալ ցանկացողների գէթ մի մասը
դրանից զուրկ չը մնայ, գիմնազիաներում տեղ
չը լինելու պատճառով,—այլ բաւականանում ենք
միայն մատնանիլ անելով հարցի կարևորութեան
վրա, որպէս զի այդ մասին մի փոքր խորհելն և
հոգային նրանք, որոնց վրա պարտականութիւն
կայ խորհելու և հոգալու:

Նկատի ունենալով այն տարբեր կարծիքները, ո-
րոնք մինչև այժմ էլ պտտում են քաղաքի մէջ,
քաղաքային ջրանցքի ջրի և կուրի ջրի վերաբե-
րութեամբ, բժշկական ընկերութիւնը ընտրել է
մի յանձնաժողով՝ եօթ անդամներից բաղկացած,
պարտաւորեցնելով նրան բազմակողմանի ըննու-
թեան ենթարկել թէ Աւշալայի և թէ կուրի ջրե-
րը, և մի վերջնական եղբակացութիւն ներկայաց-
նել այդ ջրերի յատկութեան մասին: Գանձաժո-
ղով փետրվարի 1-ի նիստին ներկայացրեց ընկե-
րութեանը իր զեկուցումը: Այդ զեկուցման մէջ
առաջ բերելով խմելու ջրի վերաբերութեամբ գի-
տութեան մէջ ներկայումս ընդունված կարծիքնե-
րը և այն եղբակացութիւնները, որոնք ստացվել
են կուրի և Աւշալայի ջրի վրա կատարած հետա-
զոտութիւններից, յանձնաժողովը, ի դիմաց իր
վեց անդամների, այն կարծիքն է յայտնում, որ
Աւշալայի, կամ ուրիշ խօսքերով, քաղաքային ջր-
րանցքի այժմեան ջուրը, ոչ թէ միայն ունի շատ
առաւելութիւններ՝ համեմատելով կուրի ջրի հետ՝
այլ միանգամայն օգտակար և լաւ է աղգաբնա-
կութեան գործածութեան համար: Գանձաժողովը
անդամներից մէկը անհամաձայն է զեկուցման
մէջ դուրս բերած եղբակացութեան մի քանի կէտե-
րի հետ: Բժիշկ խորաշոգ նոյն նիստում կարգաց
իր զեկուցումը նոյն խնդրի մասին, և իր դուրս
բերած եղբակացութեան մէջ՝ առաւելութիւն
ստեց կուրի ջրին: Գանձաժողովի զեկուցումը
լսելուց յետոյ, բժշկական ընկերութիւնը, ի հար-
կէ, պէտք է իր ընդհանուր կարծիքը յայտնէ կու-
րի և Աւշալայի ջրերի մասին, վերջնականապէս
որոշելով թէ զոցանից ճիշդ առաւելութիւններ ու-
նի, և թէ ուրեմն Աւշալայի ջուրը, այսինքն ջր-
րանցքի ջուրը որքան օգտակար է գործածութեան
համար: Ընկերութեան անդամներից միայն մէկը,
այն է բժիշկ Բաբայեւ, այն միտքը յայտնեց, որ
ընկերութիւնը շատ լաւ կանի, եթէ անմիջապէս
իր որոշումը կայացնէ զեկուցման վերաբերու-
թեամբ, և հէնց այդ նիստում որոշէ կուրի և
Աւշալայի ջրերի յատկութիւնը՝ յանձնաժողովի
զեկուցման համեմատ: Սակայն բժշկական ընկե-
րութիւնը այնքան հեռաւոր գտնվեալ, որ աւե-
լի լաւ համարեց չը շտապել մի այնպիսի կարե-
ւոր հարցի վճելու գործում, որը այս րօպէիս
հետաքրքրում է Թիֆլիսի ամբողջ աղգաբնակու-
թեանը, և որը առաջ է բերել շատ տեսակ կար-
ծիքներ և տարակուսանքներ: Զարմանալի է մի-
այն, թէ ինչու բժշկական ընկերութիւնը քաղաքի
աղգաբնակութեան առողջապահութեան հարցով
չը բարենաճեց զբաղվել սրանից մի տարի առաջ,
երբ Աւշալայի ջրի հարցը դրաւ իր ամբողջ հա-
սարակութեան և մամուլի ուշադրութիւնը, և
յանձնաժողով է ընտրում, զեկուցումներ է պատ-
րաստել տալիս այժմ, երբ արդէն միլիոններ են
ծախսվել, երբ ջրանցքը արդէն գործածութեան մէջ
է մտել, և հէնց այդ պատճառով, կուրի ջրի կողմ-
նակիցները աւելի հակառակորդներ կունենան,
քան թէ պէտք է ունենային...

Ինչ և իցէ, մենք միւս անգամ կը հաղորդենք
յանձնաժողովի զեկուցման զեկուցման իրանքը,
քանի որ հարցը առանձին կարևորութիւն ունի
ամբողջ քաղաքի աղգաբնակութեան համար:

ՆԱՄԱԿ ԱՂԱՍԱՑԱՑԻՑ

Բաժնավարի 29-ին

Մինչդեռ բաժնակի արտահանութիւնը զէպի
Մօսկվա տարուց տարի շարունակում է աւելա-
նալ, աւելորդ չէմ համարում արտահանողների
համար մի քանի անհրաժեշտ տեղեկութիւններ
տալ:

Բաժնակը, և առհասարակ ամեն այստեղից դէ-
պի Մօսկվա ճանապարհով աղանդների ուղարկ-
վում են զխաւորապէս երկու ճանապարհներով՝
Սեմաստօպոլի և Օդեսայի վրայով: Սեմաստօպոլի
վրայով դնացող ապրանքները միշտ տեղ են հաս-
նում Մօսկվա մի ամիս և շատ անգամ մի ամիսից
էլ ուշ, իսկ Օդեսայի վրայով համեմատաբար ա-

«ԱՂԲԻՐԻ» ՎԱՃԱՌԱՆՈՑ

Թիֆլիս, Գոլովինսկի պրոսպեկտ տ. Միրզոևի

Թիֆլիսում բացված է «Աղբիւր» վաճառանոց, յատկապէս երեխաների, աշակերտների և ընտանիքների համար: «Աղբիւր» վաճառանոցում ծախվում են մանկական զրբեր, պատկերներ, նկարներ, նոտաներ, բազմատեսակ շքեղ իրերէններ երեխաներին և աշակերտներին ընծայելու համար: Գալոցական և դասական հարուստ և բազմատեսակ պիտոյքներ: Եւրոպական և ինքնական մանուկանոց (գարգարուն գլխատուներ նամակների ծախաներին): Գրքեր, փոստի և ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ամեն տեսակ ընտրելու Թ. Թ. ՄԵՇ ԳԱՆՆԱՆ, որ կազմում է Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳԻ ՎԱՐԳՈՒՆԻՆ ԵՂԱՅԵՐՆԵՐԻ ՀՈՉԱԿԱՌՈՐ Թ. Թ. ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿՈՎԿԱՍՏԱՆ ԲԱՅԱՆՄՈՒՆԻՔԻ:

Վաճառանոցը ընդունում է Ռուսաստանում և արտասահմանում հրատարակվող մանկական թերթերի բաժանորդագրութիւն:

Վաճառանոցը կամենալով դիւրացնել զաւուսաբանակ հեղինակների, թարգմանիչների գործը, ընդունում է Թիֆլիսում տպագրել տալու նրանց աշխատութիւնները: Ընդունում է միջնորդ լինել և պատուիրել իրանց համար ամեն տեսակ պատկերներ, կիշայներ: Վարձու է տալիս «Աղբիւր» ծաղկատառերից և նկարներէր: Վաճառանոցը ընդունում է կոմիսայով ծախելու զանազան հրատարակութիւններ:

Վաճառանոցում գեղեցիկ է և «Աղբիւր» խմբագրութեան գրասենեակը, ուր միայն կարելի է բաժանորդ գրվել «Աղբիւրին»:

Օտարաբարաբարիք դիմում են՝ Тифлисъ. Магазины Дѣтскаго журнала «Агбюръ».

1—10 (Հ. Ե)

Ա. Զ. Դ.

Ստացուած են «Աղբիւր» պրէմիաները: Թիֆլիսի այն բաժանորդները, որոնք դեռ չեն ստացել «Աղբիւր» առաջին պրէմիան՝ Մոգեբի երկրպագութիւնը, թող բարեհաճեն շնորհ բերել «Աղբիւր» վաճառանոցը (Головинск. проспектъ, д. Мирзоева, противъ фотографіи Филипповича) ստանալու յիշեալ պրէմիան: Օտարերկրաց բաժանորդներին արդէն ուղարկված են «Աղբիւր» գործակալներին, որոնցից և պէտք է ստանան, ներկայացնելով իրանց անդորրագիրը:

1—1

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԳԱՅՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՅԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ Ուրբաթ, 12 փետրվարի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգինու ՄՕԵՐԻՍ (ՄՕԵՐԻՍ) նաւապետ FENEK (ՖԵՆԷԿ) մանկով Կ. Պոլիս, Զմիռնիա և Սիրա:

Արդէնտեղը՝ ԲԱԹՈՒՄԻՄ Կ. Գ. ԷՍՍԷՆՃԵՐԻ, իսկ ԹԻՖԼԻՍԻՄ ԳԵՐԳԻ ՀԵՋՈՒԲԵԱՆ ՀԵՋՈՒԲԵԱՆՑ:

1—3

ЗУБНЫЯ СРЕДСТВА А. ШТЕХЕРЪ
ПОДОЛЬСКІЯ ЗУБНЫЯ КАПЛИ
КОРОВКА 30 и 30 К.
ГИГИЕНИЧЕСКІЙ КОКАИНОВЫЙ
ЗУБНОЙ ЭЛИКСИРЪ
БОЛЪШАЯ ФЛАКОНЪ 80 К.
ГИГИЕНИЧЕСКІЙ ЗУБН. ПОРОШОКЪ
КОРОВКА 30 К.
СКЛАДЪ ВО ВСЯХЪ АПТЕКАХЪ И АПТЕК. МАГАЗ.

ՊՐՈՎԻԶՈՐ Ա. ՇՏԷԻՆԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԱՏԱՄՆԵՐԻ ՅԱՒԻ ԵՒ ՓՁԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՐՈՎԻԶՈՐ ԱՏԱՄՆԱԴԵՂ ԿԱԹԻՆԵՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՈԿԱՅԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ԷԼԵԿ.

ՍԻՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ԳԼԽԱՌՈՐ ՊԱՀԵՍՑ. ԹԻՖԼԻՍԻՄ՝ Կովկասեան դեղավաճառատան, և պ. պ. Շահպարտեանցի, Մակկէրի, Սէնչիփոփու և Ագմուրովի դեղատներում: ԲԱԳՈՒԻ մէջ՝ Բէկէրի մօտ, ԲՈՒԹԱՅԻՍՈՒՄ՝ Կոփոջեղի մօտ, ՍՏԱՎՐՈՊՈԼԻՄ՝ Բրոննոցկու մօտ և ԵԿԱՏԵՐԻՆՈՒՐԱՌԻՄ:

(Հ.)

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли аптекарскими товарами въ Тифлисъ (Графская ул., домъ бывш. Падурова).
ԲԱՐՁՐԱԳՈՅ ՀԱՍՏԱՎԱՏ ԿՈՎԿԱՍՏԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՍԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌԱՆՈՐ ԹԻՖԼԻՍԻՄ ԵՒ ԲԱԳՈՒԻ ՄԵՋ:

ՀԱՆՔԱՅԻՆ ԶԻՐԻ, Կովկասեան և արտասահմանեան, այս զարմանը չիշերի մէջ նոր անված-ՑԵՑԻՑ ԵՒ ՄԻՋԱՏԵՐԻՑ ՊԱՀՊԱՆՈՐ, ՄԻՋՈՑՆԵՐ, Նալթալի, քոմիֆորա, ցեց ոչնչացնող հեղուկ, Պարսկական և Գալմաթիայի փոշի, և Բուրբիլի անվան կոլված բոյոր:

ՕՐԸ ՄԱՐԲԵՐՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ՝ պրոֆէսոր ԿԵՏԱՐԱՅԻՆ, կարբոլաքրած փոշի երկաթի արճապով, որպէս ամենալաւ միջոց անմաքութեան տեղերը խտակելու համար, կարբոլեան թթու, մաքրված և չը մաքրված տեսակից, խորային կիր, ծծումբ, երկաթի արճապով և Մարգարեի կրկնաթթու:

83—100 (Հ.)

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

«ՋԻՆՈՒՈՐԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՕՆԱԴՐՈՒԹԻՒՆ»

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ

Գինն է 30 կոպէկ

Վաճառվում է «Մշակ» խմբագրատանը և հետեւալ տեղերում: ԹԻՖԼԻՍԻՄ՝ Կնուրովսկան և ուրիշ գրավաճառանոցներում, ԵՐԵՎԱՆԻՄ՝ Կ. Դատամանի խանութում, ԲԱԳՈՒԻՄ՝ Թաւայեանի և Շիրազեանի խանութներում, ԳԱՆՁԱԿՈՒՄ՝ Աղայեանի խանութում, ՇՈՒՇԻ՝ Գալեան եղբայրների գրավաճառանոցում, ՆՈՒԻ՝ Ուսուցիչ Ն. Դաւթեանի մօտ, ԱԳՈՒԼԻՄ՝ Ուսուցիչ Լեոն Թադէսեանի մօտ, ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼ՝ Վեհապետեանի խանութում: Օտարաբարաբարիք այդ դիրքը ստանալու համար պէտք է դիմեն հետեւալ հասցեով: Թիֆլիս, X. Մալուպու, въ редакцію Мшакъ.

3—10

Լոյս տեսան պիանիո համար կազմած «ԱՆԴՐԿՈՎԿԱՍՏԵԱՆ ԺՈՂՈՎԴՐԱԿԱՆ ԵՐԳԵՐ ԵՒ ՊԱՐԵՐ» (Trans-Kaukasische Volkslieder und Tänze) ՆԻԿՈՂ ԱՅՈՍ ՏԻԳՐԱՆԵԱՆՑԻ:

Գինն է 1 ռ., վաճառվում են Թիֆլիսի երաժշտական մագազիններում՝ ՍՈՒՋԱՆԱՅԵԱՆԻ և ԼԱՆԿՈՅԻ:

4—5

Արդէն ծախվում են կատարելագործված, սպիտակ բոցով, անխտանք

ՇՎԷԴԱԿԱՆ ԼՈՒՑԿԻՆԵՐԸ

ԱՄԵՆԱԷԺԱՆ ԳՆՈՎ:

Մեծ քանակութեամբ առնողներին ՆՇԱՆԱՌՈՐ ՋԵՋՈՒՄԵ ԿԸ ԼԻՆԻ:
Գործարան Գ. Ա. ՏԷՐ-ԱՍԱՏՈՒՐԵԱՆԻ և ընկերութեան, Թիֆլիսում, ՎԷՐԱ կոչված
Թաղում:

18—50

ԻՍԿԱԿԱՆ ԳԱՆՁ

է կաղմում այն դժբաղդների համար, որոնք զո՛ւ են եղել անբարոյականութեան, բժշկապետ ԲԵՏԱՌԻ ԳԻՐԸ

«ԻՆԲԵՆԱՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ»

Ռուսաց հրատարակութիւն, 3 պատկերներով, գինը 1 ռուբլի:

Թող ամեն մարդ, որ տանջվում է սարսափելի արատի հետեւանքներից, կարգալ այդ գիրքը: Նա ազատեց շատերին հաստատ կուրսութիւց: Մի ռուբլի ստանալուց յետոյ Լէյպցիգի Բ. Ֆ. Բիւրէյի հրատարակողի մագազինը ուղարկում է գիրքը ցանկացողներին: Հասցէն՝ Германия (R. F. Bierey's Verlags-Magazin Leipzig). 2—50 (Շ)

Въ редакціи газетъ „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры: 1) „Экономическое Положеніе Турецкихъ Армянъ“, публич. лекція Д—ра Г. Арцруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Oekonomische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amiranjanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amiranjanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающие получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру.

Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“. (Շ)

ԲԺՇԿԱՊԵՏ ԲԷՆԿԼԵՎՍԿԻԻ

Բժշկական ընդունարանը: Հիւանդները ընդունվում են ամեն օր 9-ից մինչև 11 ժամ՝ առաւօտեան և 4-ից մինչև 6 ժամ՝ երեկոյեան. սիֆիլիսի, կոկորդային, քիշային, ախանջի և ատամի ցաւերի բժշկութիւնը, պոմբիլը և ատամնի դնելը (ա ս ի ս տ է ն տ ա տ ա մ ն ա բ ո յ ժ Ս օ բ օ լ է վ): Ատամի ցաւով հիւանդների ընդունելութիւնը 9-ից մինչև 7 ժամ: Գոլովինսկի պրոսպեկտ, տուն նախկին Բէյոյ ճ. 5:
2—10

ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՐՈՒՆՍԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԿԱՆ, ՄՐԳԱՅԻՆ ԵՒ ԳԱՋԱՅԻՆ ԶԻՐԻ

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ

ԲԱԹՈՒՄԻՄ

(Յէրիփապա փողոցում, Կոնստանտինովի տան կից, որտեղ գեղեցիկ է Լօբկո և ընկ. տպարանը):

Պատու ունեւ յայտնելու պ. պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ ես նորից փերանորոգեցի և նշանաւոր կերպով ընդարձակեցի իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ժԱՄՍՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹԵԱՆ քոլոր ՊԱՀԱՆՆԵՐԻՆ, ջրերի պատրաստութեան փերաբրմամբ: Գործարանի կառավարութիւնը ես յանձնեցի ՖԱՐՄԱՅԻՆԵՐԻ մի ՊՐՈՎԻԶՈՐԻ, որ փորձառութիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում: Գործարանն ունի ամենանոր ձեռք մեքենաներ, նոյնպէս և ջիվիլի հեշակաւոր ֆիլՏՐԸ, որը միակ է, որ աջողութեամբ մաքրում է ջրերը կապարից, կրից, երկաթից, օրգանական, միներալական մասնիկներից ու աղերից և դերազանցում է բոլոր միւս ֆիլտրներից իւր մեքենայական և քիմիական գործողութեամբ:

Պրովիզորը մշտապէս գտնվում է և անձամբ պարապում է իմ գործարանում: Դնորով այն օժանդակ միջոցների, որ տալիս է գիտութիւնը անալիտիկական քիմիայի ճիւղում, այսուհետեւ իմ գործարանում կը պատրաստվեն, բացի զէլեմեան, մրդային և զաղային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԶԻՐԸ, ինչպէս օրինակ՝ ՎԷՐԻ, ԷՄԻ, Կարբոլաքի, Մարիէնապի ջրերը, լուծողական ջրերը բոլոր յայտնի աղբիւրներին և այլն, հետեւելով յայտնի հետազոտողների առաւած կանոններին: Արուստական միներալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հեշակաւոր բժիշկները, կարող են ոչ թէ միայն փոխարինել ընական ջրերին, բայց և ունեն մի քանի դերազանցութիւններ. նրանք կարող են միշտ թարմ զրուկեան մէջ ձեռք բերվել, մի և նոյն ժամանակ պարունակելով իրանց մէջ անխաթմու գազերի աւելի մեծ քանակութիւն, այդպիսով աւելի ախտիկի դառնալով խնկու համար և աւելի շուտ ներգործելով հիւանդ կազմուածքի վրա:

Աւելորդ չեմ համարում ասել որ ես միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաքրութեան մէջ և վերաբերվել դէպի գործս ամենամեծ ճշգրտութեամբ և բարեխղճութեամբ, որի մասին յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ:

Տարածայնութիւններից խոստովելու համար, խոնարհաբար խնդրում եմ իմ ջրերի գործածողներին պահանջել որ իմ բոլոր արդիւնքները կրեն իմ ֆիրմայի նշանակը, քանի որ ուրիշ ործ արաններ կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը:

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑ

4—50 (Ե)

ՊԵՏԵՐՔՈՒՐԳԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՅՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՅԼՏԻՈՒԹԻՒՆ ՍՏԱՅԱՄ

ՀԵՂԿԱԿԱՆ ՄԿՆԴԵՂ

ՄԻՇՈՒՆԱՑ



ՄԵՇ ԵՒ ՓՈՔԻ ՄԿՆԵՐԸ կատարելապէս ոչնչացնելու համար: Արդիւնքի գինը 1 ռ. 50 կ. Արդիւնքի 1/3 արժէ 60 կ.:

Հեղուկ բազիլի ջնիւրի դէմ: Սրուակի դիւր, միջնով միայն 1 ռուբլի:

Լուս, ցեց, բողոճ ոչնչացնելու փոշի: Դո-

ղիւսւոր պահեալ ԹԻՖԼԻՍԻՄ գտնվում է Վ. Գ. Ի. Վ. Կ. ի դեղատան ասորաբնակների մագազինում, «Ընդուն» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը:

Բիւս. Գուտման

83—100